ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿՈՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ Արա Զոհրաբյանի, անդամներ՝ Մանե Կարապետյանի, Հունան Տեր-Վարդանյանի, Գառնիկ Թուխտարյանի և Գառնիկ Սաֆարյանի,

նկատի ունենալով անհատական գրաֆիկով հատուկ ուսուցում անցած դիմորդների կողմից որակավորման քննությունները կրկին հանձնելու հանգամանքը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի և Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի 119-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

- ***Վերահանձնման որակավորման քննության քաղաքացիական ուղղվածության առաջին փուլին (հայցադիմումի կազմում) մասնակցած 252259 և 252258 ծածկագրերի գրավոր աշխատանքները գնահատել և նշված ծածկագրերի հեղինակներին համարել որակավորման քննության առաջին փուլը հանձնած:***
- ***Վերահանձնման որակավորման քննության քրեաիրավական ուղղվածության առաջին փուլին (վերաքննիչ բողոքի կազմում) մասնակցած 252260, 252255 և 252256 ծածկագրերի գրավոր աշխատանքները գնահատել և նշված ծածկագրերի հեղինակներին համարել որակավորման քննության առաջին փուլը հանձնած:***
- ***Վերահանձնման որակավորման քննության քրեաիրավական ուղղվածության առաջին փուլին (վերաքննիչ բողոքի կազմում) մասնակցած 252257 ծածկագրի գրավոր աշխատանքը գնահատել (պատճառաբանությունը՝ ըստ հավելվածի) և նշված ծածկագրի հեղինակին համարել որակավորման քննության առաջին փուլը չհանձնած՝:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի որակավորման
հանձնաժողովի նախագահ՝ Արա Զոհրաբյան

Որոշում N 12-Ա
ք. Երևան
14 դեկտեմբերի 2019թ.